

դի իմ սիրելի, ընդ որ հաճեցայ, դմա լուսարուք ։ Զոսա այսպէս ընկալաւ սուրբ Աստուծոյ կաթողիկէ եկեղեցի. սա ի սուրբ Երրորդութիւնն մկրտի՝ ի կենանն յաւիտեանից ի սմա սրբի՝ հաւասարապատիւ և ի սմա խոստովանի առանց բարժանելոյ և որոշման՝. և սմա երկրպագի՝ առանց

սխալանաց, խոստովանի և փառաւորէ զԵրրորդութիւնն և զմի աստուածութիւնն Հաւար և Որդւոյ և Սրբոյ Հոգւոյն, որում վայելէ փառք՝, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտեանից. ամէն :

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

ԼՈՒՍԱԽՈՐԶԷՆ ՅԱՌԱՋ

(Շարունակութիւն, տես Բազմավեպ 1926, էջ 289)

5. Հագիւ է դարու վերջերը կամ ըին, յունահայ հակառակամարտութեան այդ շնորհալոյն շրջանին, ուր Հայք պէտք կը զգային պատմական կարեւոր կոռուանեալ, վեր կ'իջնէ ու կը սկսի ընտելանալ Բարթողոմէոսի անունը մեր ազգին, որով կենարիւյ Ղևոնդիոս հայրապետին առ ո. Գրիգոր կեղծ նամակին մէջ՝ Զենորայ ըրվ. — զործ է դարու,՝ զոր Խալաթեանց ըր-թին ալ կ'իջեցնէ՝, — կ'ըստի՝ թէ հոռւ ընդդիմացար ի տեղի ընդդիմաց սրբոց առաջելոցն Բարթողոմէոսի և Թաղէոսի՝ ։ Ը դարուն Ստ. Սիւնեցին կը գրէ՝ թէ « ի վերայ մեր եղև հեղուծն արեան առաջելոցն Բարթողոմէոսի և Թաղէոսի՝ ։ և ապա ուրիշներ կը կրկնեն յաջորդաբար՝¹⁰ Ուրեմն մինչև Ը դարու մօտ լոկ Խորեանացոյն ընծայուած վկայութիւնը կար, և ոչ բնաւ Բարթողոմէոսն աւանդութիւն մը, որ նաև այլոց յայտնի պիտի լինէր :

Հայոց պատմաբան անձնական փափաքին արդիւնքը պիտի համարէի անոր յիշատակութիւնը, եթէ չնկատէի՝ թէ Խո-

րենացին, որ Թաղէոսի քարոզութեան աղբիւրները ցոյց տուաւ՝¹¹, Բարթողոմէոսի համար բնաւ աղբիւր չէ նշանակիր. և իւր տուած տեղեկութիւնն ալ այնքան ժամանակ աննշմարելի կը մնայ ազգէն : Այս պարագայը զիս կը ստիպեն խորհելու՝ թէ Խորենացւոյն խօսքն իսկ յետաժուտ լինելու է. և զուցէ այս պատճառաւ ալ չոր և առանց հանգամանաց է մնացեր, ինչպէս սովորաբար կը պատահի միջարկութեանց. և առաքելոյն անունն ևս զրուեր է Բարթողոմէոս կամ Բարթողոմէոս՝¹² միջնադարեան ձեռով, զոր պիտի տեսնենք հետագայ վկայութեանց մէջ, մինչ հնագոյնն էր Բարթողոմէոս՝ ըստ յոյն բնագրին, ինչպէս կը գրեն Աւետարանը և վերոյիշեալ մատենագիրք՝ Եւսեբիոս, Եփրեմ, և մինչև անգամ ղեռ Ստ. Սիւնեցին :

6. Թէ ինչ պատճառաւ Հայք զԲարթողոմէոս իրենց քարոզիչ ըրին, հետաքրքրական ու հայկական հոգեբանութեան ճշգրիտ մեկնութիւնն է բացատրութիւնը

1. Ուղղելի. «մկրտէ» :
2. Ուղղելի. «զոս սրբաբանէ» :
3. Ուղղելի ըստ յունի. «և զոս խոստովանի անբաժանելի և անմեկնելի» :
4. Ուղղելի. «երկրպագէ» :
5. Յաւելի. «զուրկութիւն, մեծութիւն» :

6. Հմմտ. Վաթրճեան, Ս. Պարգմ. 76, մ. 2, — 7. Զենոր Գլափ. Վրէնեմ, 1893, էջ 1 հմ. — 8. Զե. նոր, 10, — 9. Գր. Թորոց, 823, — 10. Անդ' 302 հմ. — 11. Աստ' 226, — 12. Վերջինի ըստ 1909թ. ապ. Տփղիսու :

նոյն առաքելոյն միջնադարեան վկայութեան, որոյ մասին պիտի խօսինք քիչ յետոյ: Կ'ընդունի նա՝ թէ թաղէոս կանխաւ ըարողած էր Հայոց: Բայց թողմաս, որ առանձին գութ ու մեծարանք ունէր մեր ազգին համար, անբաւական կը համարի մեզ այդ պարզ աշակերտը, զոր ինքն իսկ ղրկած էր Եղեմացոց, և անոր տեղ գլխաւորողմէոս առաքեալը կը յղէ. «քարոզել գաւառաբանն... փոխանակ թաղեոսի առաքելոյն» որ էր յերանասելոց անտի՝, և չունէր բուն առաքելոյ մը կարեւորութիւնը: Վկայագրիս այս զգացումը կրնանք վերագրել նաեւ անոնց՝ որ առաջին անգամ ստեղծեցին բարթողիմեան ըրողութեան համարը, և ըսել՝ թէ է դարու վերջերը տիրող մեծամոլութեան գիւտն եղաւ:

7. Այդ համբաւին հաստատուելէն յետոյ, հետագայ յոյն և ասորի գրիչներէն ոմանք ալ անոր ազդեցութիւնը կը կրեն, և կրկնող կը դառնան նոյն տեղեկութեան, բայց անմիաբան ձեւերով: Այսպէս յոյնէն Նիկեիոս կալիստոս՝ Ը դարուն՝ թէպէտ անոր ըրողութեան վայր կը զնէ Ասորիքն ու վերին Ասիա, բայց կ'ըսէ՝ թէ «յետ ժամանակի ինչ յուրանդպրութիւն գաւառին կիլիկիոյ (ուրեմն ոչ Հայաստանի) գլխավայր է խաչ հանեալ» կը վախճանի՝ Ուրիշ մը՝ Նիկիտաս Դաւիթ, որ կը զբէր թ դարու վերջերը, նոյն առաքելոյն ներքողին մէջ կ'ըսէ. «կայր սուրբ աստուածաբանն ի քաղաքի ուրեք Հայոց մեծաց: Ուրանդպրութիւն զայն լինել ասին», ուր և ի խաչ կը հանուի: Ուրեմն զըրող տարտամ էր հող: Նոյնը կը կրկնէ նաեւ Եկովմենիոս՝ Ժ դարու վերջերը՝: Ս. Թէոդորոս Ստուդացին (789-826) հայ աւանդութեան հետ զուգելով ս. Գր. Տուրոնացոյ վէպը, ուզեց՝ որ նոյն առաքելոյն վիճակած լինի «Հայաստան

տան աշխարհ», և հոն մեռած մորթագերծ ու գլխատեալ. ապա գերեզմանէն հանուեր, «ի ծով համատարած» ձգուեր ու լիպարիս հասեր է՝: Բայց երանելի ներքողագիրը չի ցուցներ մեզ՝ թէ Հայաստանի որ կողմը կը գտնուէր նշխարավար ծովը: Մեր աշխարհին տեղեակ չլինելով, դիւրաւ կ'ապցց անոր հետ Տուրոնացոյն զրոյցը, իսկ ըստ հռովմեական ժամագրոյն՝ անոր մորթը հանողն էր Աստիդէս, եղբայր Պողոմիոս Թագաւորի «Հայոց մեծաց»՝, զոր Բարթողիմէոսի լատիններէն վկայաբանութիւնն աւելի տրամաբանօրէն «Հեղիոց» կ'ըսէ՝: Նոյնպէս ասորիներէն Միքայէլ ԺԲ դարուն և Բարհեբրէոս ԺԳին՝ կը վկայեն նոյն առաքելոյն ի Հայս ըրողութեան. Դիոն. Բար Սալիբի ԺԲ դարուն՝ կը համարի՝ թէ «գերիս ամա ըարողեաց ի Հայաստանի, և ապա Թագաւորն Հերսիոս ետ ի խաչ հանել զնա, և Թաղեցաւ յեկեղեցոյ՝՝ զոր կառուցեալն էր ի նմին տեղւոյ՝»:

Կը տեսնենք՝ որ այդ միջնադարեան օտար մատենագիրք կը ծփին ու կը խառնափեն անստուգութեանց մէջ, ոմանք — հնագոյները — չգիտնալով ուր զնիլ անյայտ Ուրանդպրութիւնը, (ոմն ի կիլիկիա և ոմն ի մեծ Հայս), ոմանք անյուր և օտարոտի անունները ընծայելով հայ Թագաւորաց, ոմանք ի խաչ հանելով առաքեալը, և ոմանք՝ ժամանակաւ կրտսերագոյնք՝ մորթագերծ նշանակելով: Այսպիսիք են ահա Հ. Ագեբեանի օտար վկայագիրք ի նպաստ մեզ, որոնք պէտք ունէին ուսանելու մեզմէ, ոչ ուսուցանելու: Յետոյ եկող Հայերն ալ իրենց կարգին կ'ենթարկուին աղոնց և միանգամայն իրարու ազդեցութեան: Վանական մ. (ԺԳ դարուն) կ'ըսէ՝ թէ «խաչեցաւ ի Սանատրկոյ և հանաւ մորթ նորա»¹⁰: Տէր իսրայէլ՝ թէ «հանաւ մորթ նորա և բեռեցաւ զփայտէ», կամ

1. Ս. Գր. ԺԲ, 26. — 2. Պատ. Եկեղ. Բ, ԸԲ. — 3. P. G. 106, էջ 208. Վարդ սրբոց, Թ, 475, 462. — 4. Անուանք ԺԲ առաքելոց, Պարիս, 1681. — 5. P. G. 99, էջ 798, 798. Վարդ սրբոց, 472-78. — 6.

Վարդ սրբ. 471. — 7. Մարկոսեան, Հանգ. ամս. 1906, 41. — 8. Հմմտ. Տէր Միքայ. 10. — 9. Chabot, Chron. I, 148. — 10. Հարցմանք, Գր. Բ. 1244 Ս. Ղրբ. էջ 551.

«մորթին հանեալ վկայեցաւ»։ Գր. Անաւարդեցիին՝ թէ «գնաց առ Սանատրուկ Թազաւորն Հայոց և ի նմանէ սպանաւ որով»։ Գր. Խլաթեցիին՝ թէ «հասեալ ի խորին Հայս, հանաւ մորթ նորա և խաչեցաւ ի Սանատրուկ, և յետոյ ըցով հարեալ կատարեցաւ»։ Իսկ վանականի աշակերտը Կիրակոս՝ տեղ մը «գան հարկանելով» և տեղ մ'ալ «սրով» վախճանած կը դնէ՝։

Եւ այդ բոլոր անմիաբանութիւնը կը հաստատուն՝ թէ միջնադարեան գրողներդ, հայք թէ օտարք, զոհերն էին մեր աւանդութեան, որ իրենց օրերն ալ տակաւին չէր ստացած որոշ ձև մը։ Անգիտակից արձագանգներ նոյնչափ անգիտակից աւանդութեան մը. և մին և միւսն ոչինչ կը զգեն հին պատմութեան դէմ, որ արտաքին հայացած մատենագրաց միջոցաւ կ'ապրէր երբեմն նաև մեր ազգին մէջ, որ զայն ճանաչելով՝ անծանօթ կ'ապրէր հետագայ նորահնար աւանդութեան հետ։ Արդէն երկու հակառակ աւանդութիւնը, մին հին և միւսը նոր, չեն կարող միանալ զամայն ուղիղ լինել։ Ոչ ալ նորը սրբազրել հինը։ Անոցմէ ընդունելին այն կը համարուի՝ որ ժամանակաւ մերձագոյն է համարուածին։ Այսպէս կը պահանջէ որդմտութիւնը։

8. Նախայիշեալ հայ տեղեկատուններէն զատ և անոցմէ կանուի՝ Բարթողովոս ունի իւր յատուկ վկայութիւնն ալ, հանուած Ս. Ղազարու ճառերնտիրներէ՝, որոնք միջնադարեան խմբագրութիւն են՝ ըսինք, և ոչինչ կը զօրէ հայկական տեսակէտը պաշտպանելու։ Հ. Գաթրճեանի տեսութիւնը՝ թէ «վկայաբանութիւնը Թառնէի և Բարթողովոսի որ ի ճառերնտիրն մեր կան, չեն խոնարհ քան զհինգերորդ դար, որպէս համեմատութիւն ընդ խորենացւոյն ցուցանէ»¹, ստույգ է թաղէա-

կանի մասին, իսկ բարթողովոսնին նկատմամբ՝ արդիւնք է իւր անուշադրութեան անոր ընկած լեզուին, և այն հանգամանքին՝ որ ապաժաման և ապիկար յարասութիւն մ'է այն թաղեականին։ Միջնադարեան հեղինակը կարդացեր, և ինքն ալ կը կրկնէ՝ թէ առաքելը գնացեր էր ի Հնդկիս ու քարոզեր Մատթէի աւետարանը՝։ Զայն կը շրջեցնէ յետոյ զանազան երկիրներ, մինչև կը հասցնէ ի Հայս, և հոն քարոզել ու նահատակուիլ կու տայ «քրօք»², — կրկնուած վերև խլաթեցիին, — որով կը հեռանայ օտար և անոնց հետևող հայ հեղինակաց նշանակած մահաձևերէն։

Անոր նկարագրութեան ստրկական նմանութիւնը թաղեականին՝ ակնբեր է հետագայ մասանց մէջ։ Երկու առաքելաց միանալ զամայն կը զբաղին թէ՛ Եղեսիոյ և թէ՛ Հայաստանի խնդրով. Թովմաս է՝ որ կը յղէ զԹովմաս յԵղեսիս, և նոյն Թովմասն է՝ որ մեզ ալ զԲարթողովոսն կը ղրկէ՝։ (Միջնադարեան վկայագիրը փակագրի մը կը բանայ հոս, պատմելով թէ ի Հայս կու գայ նաև Յուդա Յակոբեան, և յանկարծակի առաքելակցին կը հանդիպի՝ Արտաշատու բլրան վրայ, որոյ յիշատակին խաչ մը կը տնկեն հոն. բայց Յուդա յօժար չէ մորթը Հայոց յանձնելու, և կ'անցնի կ'երթայ)։ Թաղեոս ի հաւատս կ'որոյս Սանատրուկ արքայազարմ դուստրը Սանդուխտ՝ որ կոյս է, և անոր հետ կը մարտիրոսանայ նոյն Թազաւորէն. նոյնպէս Բարթողովոս կը դարձնէ նոյն արքայի ծիրանեփառ ըջոյն Ուզոհի՝ որ կոյս է, և անոր հետ կը նահատակուի նոյն Սանատրուկէն³։ Երկու զոյգերուն սպանման համար ալ թաղաւորը կը յղէ նոյն պաշտօնատարը, «զհազարապետն» կամ «հրամանատար ամենայն տանն արքունի», որոնք առաքելոց քով հասնելուն՝ երկուքն ալ կը հրապուրուին

1. Յայմ. փեա. Ժ, յն. 1. — 2. Յայմ. փեա. Ժ, — 3. Յայմ. յն. 1. — 4. Յայմ. զեկ. Ժ, փեա. Ժ, — 5. Գրչ. Թ. 658 (ընդօր. 1204ի բնագրէ). Թ. 1014 (ժգ դարու). Թ. 299 (ամ 1835) են. — 6.

Տիեզ. պոմ. Բ, 464, 465. 3. — 7. Սփերց, ԺԹ, 6, 11. — 8. Անդ. 28. — 9. Անդ. 26. սուս. 228. — 10. Անդ. ԺԹ, 26 են. Ը, 14 են.

ի հաւատս, և սրով կը սպանուին արքային հրամանաւ¹։

Աղոնք նմանութեան զլիւաւոր զծերն են, չհաշուելով երկրորդականները։ Բարթոք զիմեան վկայութեան բարի խմբագրիչը, որ կ'ապրէր այն միջնադարեան շրջանին՝ ուր Հայոց առաքեալը երկուքէն չորսի ելած էին², ինչպէս պիտի տեսնենք յետոյ, փոխանակ սեպհական ձև մը աւուր իւր առաքելոյն վկայագրութեան, նիւթաւ պէս հետեւեցաւ թաղեականին, որպէս զի ապագային մեք անաշխատ նշմարէինք իւր ազդիւրը, և քնաւ չտայինք պատմական կարեւորութիւն իւր շարադրութեան։

9. Աղոք զլիւաւոր զիմեքն են Սանաւորուկ և քոյրն Ոգոհի։ Իսկ մեք տեսանք³, որ այդ թագաւորն՝ ապրած Բ զարուն, Յիսուսի առաքեալը չէր կարող ոչ զահիճ ունենալ զայն, և ոչ անոր քոյրը քրիստոնեայ ու վկայակից ընել իրեն։ Որով այս կողմանէ ալ վկայութիւնն անհիմն է իւր ներկայ բովանդակութեամբ՝ որով և շարադրուեւր է։

Երեք անուններ միայն կան իւր հայկական բաժնին մէջ⁴։ Սանատրուկ, որոյ մասին խորհնացիէն սովորեւ է՝ թէ «էր որդի քեռ Արգաւու»⁵։ Ոգոհի, զոր փոխ է տանը Զենոր Գլահէն⁶, որ զայն կը վերագրէ Անակայ կնոջ կամ Լուսանորչի մօր⁷։ Եւ Սանատրուկը հազարապետին Տեպեւտիոս յոյն անունը, անսովոր և անլուր մեր քով, զոր զարձեալ պատմահօրէն կամ փաւստոնէն՝ որսացեր է։ Ուստի ոչ ինչ կայ հող՝ որ յատկանիշ մը կազմէ Բարթոքոմէոսի կարծեցեալ առաքելութեան ի Հայս։ այլ ամբողջովին կցկցուն ու կարկառուն վէպ մ'է։

10. Քննութեան կը կարծատի նաև նաւատակութեան հայկական վայրը։ Խորեանացւոյն զրչագիրը ունին Արքանոս, Արքանոս, Արքանոս կամ Արքանոս, որ կը

զտնուէր «առ մեզ»⁸։ Պատմիչն անհարազատ թուղթը կ'ըսէ՝ «յօրքանոս քաղաքի, ի Բարմա անուանեալ տեղովն յանուն առաքելոյն»⁹։ այսինքն Բարմա ծագած էր Բարթոքոմէոսէ՝ ըստ իւր կարծեաց։ Իսկ վկայութիւնը կը զրէ՝ «յօրքանոս քաղաք Հայոց»¹⁰, որոց հետ կը միաբանին Նիկեոսի ու Նիկեոսա, գրեւով յունականրպ Որքանոպոլիս, զոր մին ի կիլիկիա դրաւ և միւսն ի մեծ Հայս¹¹, ցուցնելով՝ թէ անոր տեղը յայտնի չէր իրենց, Յետեւ գոյն օտար գրիչներ կ'ըսեն Որքանոպոլիս, Արքանոպոլիս և Արքանոպոլիս¹²։ Գրեւ թէն էր արդի եւրոպացիներէ ումանց զայն Երուսաղէմաթի մերձեցնելը¹³։ Հ. Գրիգոր զաղիացին՝ Որքա, Որքա կամ Որքանոպոլիս աւանը կը զնէ կիլիկիան իսաւրիոյ մէջ՝ Սեւեկիոյ մօտ¹⁴։

Կան աւելի խորթ ձևեր ալ։ Յովհաննէս կթղ. կը զրէ Արաքեմոն¹⁵, որ կը մօտենայ Արաքիսոսի՝ զոր Հ. Ալիշան փոքր Հայոց մէջ կը նշանակէ¹⁶։ Եւ Ասողկայ քով կը փոխուի, «կատարեցաւ առ մեզ յԱրաքիոն քաղաքի»¹⁷, զոր Յ. Մարկուարտ նոյն կը զտնէ Մարկիոն ազանդաւորի զլիւստման տեղոյն՝ Արաքիոնի ամրոցին հետ (castello Arabionis), և զայս Ուրբանոպոլիս ուղղագոյն ընթերցուածը կը համարի, ու կը հաւասարեցնէ Պարսից Արեանի հետ, Բեթ Գարմէ գաւառին մէջ։ Միանգամայն կը հետեցնէ՝ թէ Բարթոքիմեայ մահուան տեղն ու մոր թագերծութիւնը փոխառութիւն է պարսիկ Մանի ազանդապետին պատմութենէն, որ նոյն կերպով սպանուեւր է¹⁸։

Այդ անունն ինչպէս ալ զորուի կամ մեկնուի, այս յայտնի է՝ որ յունական ձև ու ծագումն ունի, հին Հայաստանի աշխարհազրպական անուանք մէջ անծանօթ է, — աղոք համար իսկ մեր պատմիչնեւրէն անգամ զանազան ձևերով զրուեւր

1. Անդ. ԺԹ, 26, 27 Ը, 25. — 2. Հմմտ. անդ. ԺԹ, 28. — 3. Աստ. 259. — 4. Ս. փեղ. ԺԹ, 26. — 5. Աստ. 257. — 6. Զեւոր, 21. — 7. Խորեն. Գ, 19, 16. Գաւ. 185, 187 ևն. — 8. Խորեն. Բ, 19. — 9. Խորեն. 295. — 10. Ս. փեղ. ԺԹ, 26. —

11. Աստ. 10. — 12. Յ. Մարկուարտ, Հմեք. ամս. 1906, 41. — 13. Հմմտ. Toura. 418, 420. — 14. Անդ. — 15. Թ. Կթղ. 47. — 16. Արք. քրիս. 74, 182. — 17. Ասող. 46. — 18. Հմեք. ամս. 1906, 41-42.

է, — և մեր աւանդութեան զօրութեամբ միայն զայն «Հայոց» կամ «առ մեզ» կ'ըսէր միջին դարը: Նկատելի է ևս՝ որ մեր մատենագրերէն ոչ ոք կը խորհի աւանդութեան կրնային սխալ հնչել ու գրել հայկական անուն մը: Բայց մեր հարց ինչ պարտականութիւն ունէին՝ իրենց տան մէջ հանգչող առաքելոյն նահատակութեան ու թաղման՝ վայրին անունն օտարներէն սովորելու, և փոխ առնելու անաշխարհիկ կամ տարաշխարհիկ կոչումներ:

Այդ պարագայէն միակ հետեւութիւն մը կ'ենէնէ. այս՝ թէ մինչև Բաբթողոմէոսի վէպն արձանագրելու ժամանակը, այսինքն ժ դարու մօտերը, մեր մատենագրաց դեռ անյայտ էր անոր գերեզմանին տեղը հայ հողին վրայ, որով անոնք հարկադրուած էին օտարներէն որսալ իրենց անձանթ անունները, իսկ Յովհաննէս կթղ. աւելի խոհեմ գտնուեցաւ՝ որ և է տեղ շնչանաւ կելով, այլ միայն աւանդութեան արձագանք դառնալով, և ըսելով երկու առաւ ցեղոց համար՝ թէ «նշխարեալ ոսկերք նոցա կան ի միջի մերում»⁷. Թէ ո՞ր, ինքն ալ չէր կարող ցուցնել, ինչպէս և ոչ ու. Ներսէսի հետագայ անանուն պատմիչ մը, որ ներթափէ կրկնեց նոյն կաթողիկոսին ըսածը⁸, և որուն շատ կառնորդութիւն առաւ Օրմանեան⁹, չզգալով փոխառութիւնը:

11. Նախ թորենացոյն առ Սահակ Թղթին յօրինողը, կամ աւելի հաւանօքէն յետին օրինակող մը՝ խորհեցաւ որոշել այդ վայրը, և աւելցուց՝ «ի Բարմա աւանդեալ տեղաւն»¹⁰, հայ ականջաց համար նոյնպէս խորթ անուն մը, որով կը ստիպուի նա անոր մեկնութիւնն որոնել առաքելոյն անունն մէջ: Սա տարբեր դարձաւ յետոյ Յայսմատոսաց գրիչներուն, որոց երեցագոյնը տէր խորայն առաւ կրկնեց նոյնը, թաղեցին զնա հուպ ի

քաղաքն Ուրբանոս՝ որ կոչի Բարմ»¹¹. և այլուր քալ մ'աւելի ըրաւ և ըսաւ. «զնաց Բարդղղիմէոս ի Սալամաստ քաղաք Հայոց, ի տեղին որ կոչի Բարմ, և անդ սպառնաւ ի Թաղաւորէն Սանատրկոյ»¹². և կամ «ի Բարմ, որ է մերձ ի Սալամաստ, մորթն հանեալ վկայեցաւ»¹³, Նոյն համոզումը ցոյց կու տայ նաև Կիրակոս, իբր քսան տարի վերջ (1269ին). «Բարդղղիմէոս զնաց ի Հեր և ի Սալամաստ, և եկն յՈւրբանոս քաղաք և քարոզէր անդ»¹⁴. և յետ սպանման «Թաղեցին զառաքեալն ի տեղաւն»¹⁵ որ կոչի Բարմ»¹⁶. և այլուր՝ թէ «թաղեցաւ ի տեղաւն որ կոչի Բարմ, մերձ ի Սալամաստ քաղաք»¹⁷, զոր կրկնեց Անաւարդեցին ևս՝ Ուրբանոս ժի դարէն կը սկսին Պարսկահայոց Սալամաստ քաղաքին մօտ որոնել անոր հանգստարանը: Բայց Թուրք մ'էր լուր, առանց ցոյց տրուելու գերեզմանը, և ոչ Բարմ անուամբ յայտնի տեղ մը:

Այդ պատճառաւ ժի դարու սկիզբը Գր. Խլաթեցին կրցաւ հետանալ այդ կարծիքէն ու տեղէն, և «յԱղրակ» զնել առաքելոյն քարոզութեան ու մահուան վայրը՝ և թէ «թաղեցաւ յՈւրբանոս քաղաք»¹⁸ որ արդ ասի Աղրակ¹⁹: Այս վերջին համատեղութիւնն երթալով զօրացաւ, որով Առ. Դաւրթեցին ալ (1662ին) գրաւորաւ կապեց նոյն գաւառին հետ. «յերկիրն Բարմայ՝ որ այժմ ասի Աղրակ»²⁰: Ուրբանոսի կամ Բարմայի հաւասարու թիւնը Աղրակի հետ՝ կատարուեցաւ ժի դարու մօտերը. և այդ ժամանակէն միայն սկսան նայիլ այդ հայկական գաւառին վրայ՝ իբրև Բաբթողոմէոսի հանգստավայրին: Աւգերեան՝ Աղրանոցոյս յուսնակերպ Աղրանոցոյս ձև իսկ մերձեցուց Աղրակի²¹, զոր գաւառնալի զուգարիպու թեամբ մը կրկնեց Օրմանեան ևս²², անձանթ ծնալով Աւգերեանի:

12. Սակայն այդ մերձեցումն հիներու

1. Մարմնը կը հանգչանան «ի նմին տեղաւն» Սոփ. 80. — 2. Գ. Կթղ. 68. — 3. Սոփեթ, է, 10: — 4. Արտ. Հայտ. 55: — 5. Յայմ. գեկ. ԺԲ, փեա, ԺԳ, յես. Է. — 6. Յայմ. գեկ. ԺԳ, յես. Է. —

7. Յայմ. յես. Է. — 8. Յայմ. գեկ. Ը, յես. Է. — 9. Դաւրթ. 425. — 10. Վարդ արք. Թ, 466-67. — 11. Աղր. 29:

Թէ նորերու՝ բռնազբօս էր ու հակապատմական։ Վասն զի միջին դարու մէջ Արծրունեաց տոհմը, որուն սեպհական էր Աղբակ, տակաւին անտեղեակ էր առաքելոյն գերեզմանին հոն գոյութեանը։ Անոնք արդարեւ ունէին նոյն գաւառին մէջ Ս. Խաչ վանքը, որ իրենց տոհմային տապանատունն էր՝ Բաց աստի՝ Գուրգէն իշխան «հրաշափառ յօրինուածով շինէ (նաւ) գեկեղեցին ի քաղաքին յԱղաճակերտ ի մեծն Աղբազ»։ Եւ Բարթողովոյն ցանկալի գերեզմանին վրայ, որ Արծրունեաց տան ու պատմչին մեծագոյն սրբավայրը պիտի լինէր, խորհող՝ տեսնող՝ զարդարող եւ յիշող միակ չկայ։ Պատճառ. որովհետեւ անյայտ վկայարանով ոչ ոք կը զբաղի մեր մահականացու աշխարհիս վրայ։ Եւ այս բոլորէն կը տեսնուի՝ Թէ որքան յետաժուտ բաներ են Բարթողիմեայ վանքն ու գերեզմանը՝ որ կը մեծարուին այսօր Աղբակի մէջ, յօգուտ ասանդութեան «անհակառակելի փաստեր» կազմելով յաչաՍորմանեանի, եւ նորահնար անպէտ գիտեր՝ պատմաբանութեան առջև, որ չէ կարող բմբռնել առաքելական գերեզման մը, յորում քնաւ չեն մտեր առաքելոյն ոսկրները, որոնք կը գտնուէին՝ քսինք՝ Յունաց ձեռքը՝. եւ որոց աներևոյթ հանգըստարանը Հայաստանի մէջ ու դուրսը կը թափառի գաւառէ գաւառ՝ ըստ քիմի մասնականագրաց։

(Շարայարելի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

1. Արծր. 225, 244. — 2. Նոյն՝ 287. — 3. Ա.Պ. 298.



ԴԻՏՈՂ ՈՒԹԻՒՆՆԵՐ

«ՀԱՅԵՐԷՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ» ՈՒՆ՝

Յարգելի հեղինակին երկար տարինեւրու նուիրումը հայ լեզուի ուսումնասիրութեան եւ բառամթերքի պատրաստութեան՝ անշուշտ ամէն հայու գնահատանքին արժանի է. մենք ալ այդ գովելի գործին շուրջ խօսքիծներ չէ որ պիտի յերկրենք, այլ դիտումնիս է պարզապէս քանի մը դիտողութիւններով քիչ միւսելի լոյս սփռել կամ լաւ եւ ճշդ մէկ քանի բառերու նշանակութիւնը որ հեղինակէն անլոյծ կամ տարտամ թողուած է։ Վստահ ենք որ այսու հեղինակին ալ հաճոյ գործ մը կ'ընենք, քանի որ մեր դիտողութիւնները պիտի յանգին իր իսկ նպատակին որ է հայ լեզուի ուսումն ու զարգացումը։

Ա. — Պնդեալ հոռոմափսիկ (Էջ 22).

Յարգելի հեղինակը բաւական անորոշ կը խօսի մեր ընդգծած բառին վրայ. ըստ իս հոռոմափսիկը յունական փականքի նշանակութիւնն ունի, համապատասխան ֆրէնկի կամ ֆրենկիյէ բառին զոր այսօր իսկ կը գործածեն մեր արեւելիք, եւ կը նշանակէ երկաթէ գործիք մը, զամերով դրան կամ արկղի միացած, որ կը բացուի—գոցուի երկաթէ բանալիով։

Արդ ինչպէս մեր արեւելեան ժողովուրդը եւրոպական կամ արեւմտեան փականքը ֆրենկի կը կոչէ. համեմատօրէն կաղանկատուացւոյն օրով ալ նոյնպէս արեւմտեան կամ յունական փականքը եւ կամ անոր նմանը՝ հոռոմափսիկ կը կոչուէր։ Հետեւաբար կաղանկատուացի եւս կ'ուզէ քիչ այն տուփը յունական փականքով գոց է եղեր։

1. Հր. Ա.Պատեան. Ցգ. Վենետիկ 1918.